



ԲԱԶՄԱՎԵՊ

ՈՅԺԳ. 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ. — ՄԱՐՏ

ԶԱՊԵԼ

(Տես առաջին մասը յերես 35:)

Ե. Ա. Ա. Հկարցաւ Զապելընդիմանալ Հայոց, և կոստանդնի ու Հեթմոյինդրածին. իմացաւ Աստուծոյ կամքը, և յանձնելով զինքը անոր նախախնամութեան, իր ազգին հաւատարմութեան, պայլին պաշտպանութեանը, և փեսային սիրոյն, պսակեցաւ 'ի հարսն Հեթմոյ և 'ի թագուհի Հայոց, եկեղեցական և քաղաքական մեծ հանգիստով և հասարակաց հաճութեամբ և ուրախութեամբ. որոց մասնակից ըրաւ կոստանդին՝ ('ի հաստատութիւն աշխարհին և իր զաւակին) այն ազգերը կամ այն թագաւորները՝ որոնց հետ յարաբերութիւն մ'ունէին Հայք: Գրեց առ Սրբազն Քահանայապետն, առ կայսրն Ալամանաց, դաշնակցեցաւ ընդ սուլտանին իկոնիոնի. տէրութեան պաշտօնները յանձնեց արժանաւորաց. իր անդրանիկը (Սմբատ) սպարապետ դը-

րաւ, մէկ որդին այլ (Լեւոն) Մարաչախու կամ իշխան բազարորոշեան. իսկ ինքն անուանեցաւ Արքանայր և Աւագ պարուն. և թէ իր թագազարդ տանը և հարախն, թէ բոլոր աշխարհին խորհրդատու, և ամենահաս օգնական ու կառավարիչ եղաւ քառասուն տարւոյ չափ՝ ցխոր ծերութիւնն († 1263). Հեթմոյ և Զապելի թողլով աւելի փառք և վայելքը, իրեն վրայ առնըլով հոգ և աշխատութիւնը. և այսպէս ճշմարտեց իր որդույն ըսածը, թէ հարիւրապատիկ փոխարինեց Լևոնի՝ զինքն ազատելուն՝ 'ի կապանաց սուլտանին, անոր դատեր ասանկ հայրութիւն և հազարպետութիւն ընելով. և ճանչնալով միշտ զնա ժառանգ թագաւորութեան Հայոց և տիկին: Այսպէս այլ ազգն՝ թէ և թագաւոր կոչէր զՀեթում, բայց նախապատիւ ճանչնայր զթագուհին Զա-

պել, նոյնպէս և յետագայք . գոնէ մինչ
անոր մահը և Հեթմոյ մինակ մնալը .
ինչպէս այն մօտ ատեններ գրուած յի-
շատակագիրք ոմանք առանց իսկ Հեթ-
մոյ կ'ըսեն . «ի թագաւորութեան Հայոց
» Լևոնի , որդւոյ Զապել թագուհւոյն ,

» զստեր Լևոնի թագաւորի » . կամ ինչ-
պէս Յովհանն Երզնկացի զստելով կ'ըսէ՝
վասն նոյն Լևոնի (Գ) , «որդւոյ իմաստուն
» արքային Հեթմոյ՝ հօր , և մօր՝ Զապելի
» սրբոյ բագուհւոյ » , և վահրամ՝ ի
շարս թագաւորաց զԶապել միայն յիշէ :



Նոյն ինքն Հեթում այլ թէ և իր ա-
նուամբ ստակ կտրէր , բայց ինչպէս դի-
մացի պատկերիդ վրայ կու տեսնես ։ ,
զԶապել իր աջակողմը կու դրոշմէր ,
բարձրաձող խաչ մը հաւասար բռնե-
լով , և արքունի գաւաղան . որ (եթէ
չեմ սխալիր) երբեմն միայն Զապելի
ձեռքը կ'երևի . (դրամին եղերքն այլ
կարգա կարողութիւնն Աստուծոյ է .
միւս կողմն տես զառիւծն խաչակիր՝ նը-
շան Լևոնի տան՝ զոր պահեց և Հեթում
և իր պայազատքն , եղերքը իրենց ա-
նունը գրելով , ինչպէս հոս Հեթում
ԹԱԴԱՒՈՐ ՀԱՅՈՑ .)

1 Յեշատակարան գերականին :

2 Արծաթ դրամի մը պատկեր է իբր Եօթնպա-
տիկ մեծութեամբ խականին . աւելի ազնիւ նիւ-
թական յիշեցուցիչ մը չունենալով Զապել՝ հար-
կադրինք զայս ներկայացնել :

Մեր երկայնաշար թագաւորաց պատ-
մութեան մէջ ամենէն ցանկալի և գե-
ղեցիկ մասերէն մէկն է Հեթմոյ թագա-
ւորութիւնն , (որ մեծ մասամբ այս օ-
րուան յիշատակէս գուրս է) , և շատ եր-
ջանիկներէն մէկն , գոնէ երկու թագա-
լըցաց կենակցութեանն ատեն : Հեթում
որ երբեմն իբրև զբոյր գգուեր էր զԶա-
պել իր հօր պայլութեան ատեն , և հի-
մայ իբրև հարսն և լծակից ունէր , պա-
տուէր զնա և իբրև տիկին և իր թագին
պատճառ . Զապել այլ տեսնելով անոր
զգաստութիւնը և բարեպաշտութիւնը ,
յօժարութեամբ կ'ուզէր անոր թագա-
ւոր հոչակուկին . կուսութիւն քան զա-
մունութիւն նախապատիւ սիրելի էր
իբրեն , բայց սիրեց զամուսինն . նախա-
խնամութիւնն այլ օրհնեց իրենց սէրը և

պտղաբեր ըրաւ, թէ և ջապել 44 ամեաց
էր պսակուած ատեն և իրը 36 ամեաց
բոլորեց կենաց պսակը. իրենց թագա-
կցութիւնն եղաւ յամին 1226, իսկ ան-
դրանիկնին յիշուի իրքն տասն տարի
վերջը: Ուժ զաւակ ընծայեց, երեք
մանչ և հինգ աղջիկ. առաջին՝ Լևոն (Գ)
թագաւոր. Բ, Թուրոս. ասոնց վար-
քը և դիպուածը պատմեր եմ քեզի,
Հայկակ¹. Գ, Ռուբեկն որ շատ չապրե-
ցաւ երկրիս վրայ. Դ, (Պատերքն) Ֆիմի,
որ Սիդոն քաղաքին գաղղիացի իշխա-
նին՝ Յուլիանու Խալինեան՝ կին եղաւ.
Ե, Սիակի՝ կին Պեմունդայ Զ. Անտիոքայ
ըրնձին. Զ, Ռիբա՛ կին Սարուանդիքար
բերդին տիրոջ, (զոր արևմտեայք Si-
re de la Roche անուանեն). Է, Մարիամ
կին Կիտայ Խալինեան (Guy d'Ibelin)
գաղղիացի սենեջալին կիպրոսի (sé-
néchal). Ը, Իգապել, իր մօր և մամուն
անուանակից, շուտով թռաւ յերկինք²:

Ը. Զաւակաց զարդացման և դաս-
տիարակութեան խնամքը չակաած՝ Զա-
պել իր տիկնութեան առաջին տարի-
ներն, ինչպէս Ֆիլիպի ատեն այլ, իր
անձնական կրթութեանը պարապէր
մասնաւոր սիրով և յօժարութեամբ
բարեգործութեանց և ուսման, հետևե-
լով իր հօրը փափագանաց և օրինա-
կին, և ջանակից գտնելով իր փեսայն.
Երկուքն այլ իրենց աստիճանին կա-
րեւոր փառք և պատշաճ կու սեպէին ըգ-
գիտութիւնս, մանաւանդ Սուրբ գրոց.
Գրասիրաց և գիտնոց ձեռնտու կ'ըլլայ-
ին. կու պատուէին, ընտաներար կ'ըն-
դունէին, հարցընէին, և իրենց համար
գրել տային: Այսպէս երբ մեծանուն
վարդապետն (և պատմիչն) Վարդան Ա-
րևելցի եկաւ 'ի կիւլիկիւս՝ կաթողիկո-
սին քով, Հեթում և Զապել մեծ պա-
տիւ ցուցին իրեն, և իբրև աշակերտք՝
'ի Ա. գրոց և 'ի քերականութենէ խրն.

զիրներ հարցընէին . որոց պարզ և ժամանակին դիւրահասկանայի լեզուաղբատասխանի և մեկնութիւն գրած է . մէկուն մէջ կ'ըսէ առ չեթում, յիշելով զթագուհին . « Այժմ հայնց արակիմ Պարոն, սակաւ մի աշխատեա (Շիկարդալն) . քո սակաւ աշխատիլն՝ առաւել է քան զայլոց շատն . . . Եւ դուքի իմ տառապեալ և տկար յիշես ցես, որ զքեզ սիրէ առաւել քան զամել . . . Բայց աղաչեմ զպարզմիս (արգելու) մարդ և զառաքինի՝ մի հարցանել (այս գժուար խնդիրները), որ չամաշեն . զի (և) ես նախահոգութեամբ զրեցի . և թէ առժամայն զիս հարցանեն՝ և ես գտանիմ տկարացեալ . վասն որոյ մի մեղաղիր լինիր Ժմուն (առժամայն, մէկէն) չգըշեալ տանողացն զտեսութիւն բանին : Եւ ես զիտեմ որ այս չէ թագաւորական իրք, (գրած զիրքն), այլ ոսկէդիր պիտէր և ճարտար գրչի . ես շատ պատճառ ունէի՝ որ խափանէր զիս յայս ձեռնարկութենէս . . . բայց սիրովն հրաշագործիւ յաղթահարեալ եղեն պատճառքն . և որպէս տեսանէք՝ եղե . թէ կամիա՞ դիւրին է տալ փոխել յար զէկն (մաքուր օրինակել), որ հեշտ կարդայք . և թող Գրիգորէսն փոխէ որ բան չկորնչի : Բայց իմ կամ է որ իմ մատանց սատարն՝ մնայ առ ձեզ . ո զիտէ թէ աւելի շնոհւոր՝ լինի ձեզ, վասն յուսոյն իմայ որ առ Տէր, և սիրոյն՝ որ առ ձեզ . զի այնց (այնպիսի) ճառ և պատճութիւն չէ՝ որ շատ աշխատանք տանին, և ապա բան գտանեն . թէ թուղթ մի կարգաս Ժմուն՝ կամ երկուք՝ զտանես յորպի խորդականութեամբ : Եւ Աստուծով՝ տղայահասակ և մոռք և աչքը զօրաւոր էք . և 'ի միան՝ գամ կարդալն սակաւ ինչ աշխատիք, և յայլն՝ անհոգ լինիք : Եւ զի արքայ և արքայունի 'ի միում մարմնի տեսանի, և հասարակ է հոգեորն և մարմանաւորն, թէ Աստուծով իրք մի օգուտ լինի 'ի գրելոցդ կամ մսիթարութիւն՝

1 Բազմավէպ 1862, Երես 37:

2 Վահրամ քարառակար Ալենի (Գ) որդւոյ
Զապելի, և հին ցեղագիրն Փրանկ՝ վկայեն այս
ուժ զաւակաց. միսալին որբ իններորդ մ' այլ ա-
ւելցնեն Օչին անտաշի. և առաւել որբ տաս-
ներորդ դուսար մ' այ անանուն:

» Երկուցդ (այլ) լիցի : Եւ զակնդ բազ-
» մագոյն և պայծառ՝ որ պսակէ զձեղ
» յափիտեան (զիլքն), թող թագորհի
» պահէ, և 'ի պիտոյ ժամն՝ առնոյք 'ի
» նմանէ. և նմա հրամայէ Պօղոս հար-
» ցանել զձեղ և զպատեհն ծանուցա-
» նել. և պարտական են, ասէ, ապրե-
» ցուցանել զիրեարս՝ առն և կնոջ : Եւ
» զերկուինդ ապրեցուցէ Տէր Յիսուս
» կենդանութիւնն ձեր՝ 'ի խնամն Հօր և
» 'ի գութ Հոգւոյն սրբոյ . յուոգումն
» մննդեան դալարարձակ տնկաբողբոյ
» շառաւեղեալ ոստոցդ, ծիրանածին
» տղայոցդ, 'ի գիրկս Սիոնի սրբոյ . 'ի
» կատարումն պսակման Հայակոյտ աղ-
» նուական ազգաց և ազանց, տոհմից
» ազատաց . ազատեցուցիչք՝ արեանա-
» ոու զարմից, լծաղիք և բեռնաբար-
» ձողք, կորացուցիչք օտար ազգաց . 'ի
» փառս փառաւոր և պաշտեցեալ Աս-
» տուածութեանն » ,

Զապելի ձեռնտութեանն առ ու-
սումնասէրս՝ գեղեցիկ վկայ և պտուղ
մ'այլ է իր որդւոյն (Գ. Լսոնի) քար-
տուղարն՝ Վահրամ վարդապետ, ինչ-
պէս ինքնին ըստ իր տիրոջ թագաւոր
օծման օրը ատենաբանելով մայր եկե-
ղեցւոյն մէջ. « Երանելին Զապել բա-
» գուհին, որոյ ողորմութեանն և առատ
» պարգևացն որ առ ուսումնականնն՝
» պտուղ է մերս նուաստութիւն, և ևս
» վեհագունից քան զմեզ. ընդ որում
» զանճառ բարութիւնն ընկալցի փո-
» խարէն » : Որով կ'իմացընէ Վահրամ
թէ Զապել կամ իր մասնաւոր ծախ-
քովն դաստիարակել տուեր էր զնա և
իրեն նմաններ, կամ պատճառ եղեր՝
արքունեաց դպրութեան մէջ մոցընե-
լու զնա :

Զապելի աւելի ևս հոչակեալ, գո-
վեալ և օրհնեալ արդիւնքն իր գթած
և կարեկից սրտին արդասիք՝ ողորմու-
թեան գործքերն էին, որք և առանձնաւ-
կան բարեպաշտութեան գործոց քով՝
իր պայծառ հոգւոյն արտաքին ճառա-
գայթներն կրնային ըստիլ :

Ժամանակակից պատմիչ մը կ'ըսէ .
« Յոյժ բարեպաշտ էր կինն այն և ող-

» ջախոհ . սիրող ամենայն երկիւղածաց
Աստուծոյ, և աղքատասէր . պահօք և ա-
» զօթիւք հանապակ ճգնէր»: իսկ 'իթա-
գուհւոյն բարերարեալ ատենադպիրն
իր ոտանաւոր գրած Ռուբինեանց պատ-
մութեան մէջ այլ կու դրուատէ զնա .

« Սա աւաւել բարեպաշտեալ
Եւ հաւատովըն բարձրացեալ .
Սիրով յԱստուած էր միացեալ
Եւ յերկիւղ Տեառըն խրատեալ .
Բարի գործովք էր զարդարեալ
Եւ աղօթիւքըն մշտ մաքրեալ .
Զիոնարհութեան զարդ ըգգեցեալ .
Զպարկեշտութիւն նախապատռեալ » :

Ոչ միայն անթիւ ողորմութեան գործ-
քեր լոփիկ և անցողաբար ըրաւ Զապել,
այլ և երկարատև մնայուն յիշատակ-
ներ թողուց . որոց գլխաւոր կարծեմք
զյիշեալն 'ի գրոց Հիշանդանոցն Սայ,
զոր կանգնեց յամին 1241. և իր ծիրա-
նածին զաւկըներէն աւելի, եթէ կըր-
նամ ըսել, գթով ինամէր զհիւանդն .
ոչ միայն առատ ոոճկաւ՝ զոր իր զար-
դերէն և անցաւոր զբօսանկներէն կըտ-
րելով՝ կապեր էր անոնց, այլ և ան-
ձամբ այցելութեամբ և ձեռօք դարմա-
նելով, ըստ խոսրովաննուշայ բարեպաշտ
դշխոյի բազրատունեաց : Անշուշտ բո-
լոր Ռուբինեանց տէրութեան ատեն
անջինջ մնացեր էր այս յիշատակս, թէ
և Սիս քաղաքն շատ հեղ թշնամեաց և
կրակի մատնուեցաւ . իսկ յետ բոլորո-
վին տէրութեան վերցուելուն և քա-
ղաքին աւերման, և ամենայն արքունի
յիշատակաց մոռացութեան, Զապելի
չքնաղ սրտին յիշատակին մէկ փոքրիկ
յայտարար նշոյն՝ յանկարծ յետ 600
բազմադէպ տարիներու՝ մեր օրերս ա-
րօներու տակ արտերուն միջէն յերեան
ելաւ . վէմ մը՝ որուն վրայ արձանա-
գրեալ էր դշխոյաշէն անկելանոցին և
աղքատանոցին կանգնումն . գտող գե-
ղացիք՝ որոնք պապէ պապ լսեր գիտէին
և պատուէին իրենց երկրին մայր և պար-
ծանք Զապել թագուհին, իրարմէ իսե-
լով բաժնեցին արձանաքարը : կու ցա-
փմ այս ցանկալի նշխարին կորստեան
վրայ, բայց անոր հետ մեր հայրենեաց .

Հազարներով յիշատակաց կորստեան վրայ ցաւելուս ատեն՝ դարձեալ գոհ կ'ըլլայի եթէ ամենքն այլ այդպէս 'ի հայրենակցաց բոնաբարեալ և համբուրեալ կոտրած կորած ըլլային։ Այլ և յուսամ որ ազգերնուս երախտազէտ պատկառանքն և սէրն առ յետին գերահոչակ մայրն և տիկին իւրեանց՝ Զապել չուշանայ անոր ուրիշ յիշատակ այլ յերեան հանել՝ 'ի փառս անցելոցն և 'ի միսիթար մնացելոցս։

Թ. Բայց Զապելի ամենէն մեծ և գովելի չնորհքն՝ իր սրբասէր և երկիւղած կենցաղավարութիւն էր, զոր այնպէս զմայլելով յիշեն ամենայն ականատեսքն և մերձաւորք ժամանակաւ, ինչպէսքիշ մ'առաջ լսեցիր. որոց մէկն այլ համառօտիւ կոչ զնա «Ամենագով բագուհին Զապել»։ միւս մը՝ «զգուշակենցաղ թագուհի և ըստ Սաստուծոյ քաղաքավարեալ»։ ուրիշ մ'այլ՝ թէ «Աստուածահանց կենքը կային 'ի Քրիստոս» (ընդ Հեթմոյ)։ իր բոլոր հոգն յերիս դարձընելով՝ առանց իրարմէրաժնելու, 'ի խնամն մայրական և տիկնական, որոց համար իմացաւ իր կոչումը, և թէ անկէ հրաժարելն՝ իր աշխարհքին մեծամեծ շփոթութեանց և կոռոց պատճառ պիտի ըլլար. — 'ի խրնամն ազբատաց և կարօտելոց. — և 'ի խրնամն ներքին մարդոյն, իր հոգւոյն. զոր և յարքունիս և 'ի լծակցութեան առն թագաւորի՝ իբրև 'ի կուսաստանի ամօթխածութեամբ և համեստութեամբ զարդարէր. և բազմաբողբոջ զաւակացն՝ միանգամայն գորովի մայր և արթուն դաստիարակ էր։ Եւ այնքան պարտուց և պատշաճից մէջ երբ մինակ ըլլար յարքունիս (շատ հեղ Հեթմոյ պատերազմի կամ ուրիշ գործոց համար հեռանալով), յառանձնութեան պալատանն ճգնէր պահօք և աղօրիշք։ Բայց իր աստուածասէր և մարդասէր սրտին միշտ բաւական չէր ըլլար առանձնակեաց սրբութիւնն. շատ հեղ պալատէն դուրս կ'ելնէր՝ թէ իբրև յայտնի թագուհի և թէ իբրև ծածկեալ անծանօթ անձ մը, երթալ վագել ուր որ բարեպաշտու.

թիւն և ողորմածութիւն կրնային աւանիլ։ կ'երթար երբեմն իր սիրելի ըզբօսարանը, իր զաստակերտ թէատրոնը՝ լսելու պրտառուչ ձայներ. կ'երթար իր Հիշանդանոցը և Աղքատանոցը, կամ ուրիշ հիւանդանոցներ և առանձին տուներ, ուր այլ որ լսեր թէ հիւանդ մը կայ, երեսէ ընկած կայ, կամ կարօտ կայ թէ մարմնաւոր թէ հոգեւոր դարմանի։ . . . կու յիշեմ զմեծ և զիւցափառ կայարն Օգոստոս, որ իմաստութեան այլ պատուող՝ շատ հեղ հրաւիրէր իր առանձին սեղանին կցորդ՝ իր ժամանակին երկու մեծ բանաստեղծքը, Վիրդիլիոս և Ովբատիոս. ասոնց մէկն, կ'ըսեն, չնչառութեան նեղութիւն ունենալով ստէպ հեկեկալու ձայն հանէր. մէկայն աչքը ճպուտ՝ ստէպ արտասունք կաթէր. Օգոստոս ծիծաղէր զուարճանայր ըսելով, «Նստեալ կամ ես ընդ մէջ արտասուաց եւ հառաջանաց»։ — Վերցնուր գլուխդ, (ուսկից որ ընկած է) ովլ տիեզերակալ Սեբաստոս Օգոստոս, որոց մեծութեանդ արձաններն և կամարներն 'ի Տիեզերիսէ մինչև 'ի Սանդարիս (Զաքարիա-սու) գեռ կանգուն կան, որ Ընկիւրիոյ յիշատակարանիդ մէջ յիշես Հայոց թագաւոր մը դնելդ այլ. տես, (եթէ կրնան տեսնել այն աչքերն՝ որ 14 տարի մէկտեղ ապրելով՝ չտեսան զերկնից և զերկրի լցոն՝ Քրիստոս), տես զՀայոց թագուհիս այս, որ Քրիստոսի խաչին նշանաւ թագը կապեր և բարձրացուցեր է. տես ովլ մեծդ և ամենամեծդ յերկրի, տես զփոքը դըշխոյն կիւկիւրիոյ ինչպիսի արտասուաց և հառաջանաց մէջ նստեալ կայ, և սիրէ նստիլ ընդ երկար. լսեցիր զու այլ այսպիսի հեկեկանք մը. սրբեցիր այսպիսի արտասունք մը. նստար երբէք ընդ մէջ հեծութեան հիւանդաց և արտասուաց ապքատաց։ Տես. մենք տեսնենք հոս զԶապել. ինչպէս ոմանց առատապէս ստակ, զդեստ և զեղ բաշխէ. ոմանց անձամբ այլ ծառայէ, սփոփէ, միսիթարէ. ինչպէս, շատերը՝ աւելի առատ ու քաղցր սրտով և բերնով կույրդորէ հոգինին հոգալու. հին եկե-

զեցւոյ զգաստ այրեաց և սարկաւադու-
հեաց նման՝ կու սովորեցնէ տղիտաց ըզ-
կանոնս և հրամանս հաւատոց, կու սի-
րեցընէ անհոգներու եկեղեցւոյ սուրբ
խորհուրդները, կու յիշեցնէ իրենց ան-
ցեալ վարքը, 'ի զղջումն շարժէ խիստ
կամաղտոտ սրտերը, խոստովանել տայ
մեղերնին և սուրբ հաղորդութեամբ
զօրացընել հոգինին. և այսպէս զոմանս
մարմնով բժշկէ, զոմանս այլ հոգւով յա-
ւիտեան հանգչեցնէ: Խոկ այնպիսի տե-
ղուանիք՝ ուր որ պատշաճողութիւնն կամ
ատենն չեն թողուր իրեն երթալ, իր
հաւատարմաց մէկը կու զրկէ՝ նոյն խը-
նամք և հոգը մատուցանելու: Այս բա-
ներուս մէջ կու ճանչնայ Զապել զինքն՝
թագուհի և մայր ազգի:

Երբեմն այլ իր սրտին վերաթռիչ
կրակէն վառուած ու վարուած՝ կ'ենէր
գաղտուկ հաւատաւորի մը պէս՝ զլուխը
քօղով ծածկած ու 'ի գետին խոնարհած՝
իրը հոգւով քան աչքով տեսնելով զճամ-
բան, կու փութայր կ'երթայր ուխտատե-
ղեաց և վանորէից դրանց քով աղօթքի
կենալու. մանաւանդ ուր որ լսէր թէ
սուրբ անձ մը կայ, ոչ միայն հոն անոր
մօտ փափաղէր հանիլ, այլ և կ'ուզէր
նոյն ճամբէն երթալ, նոյն հողն ու քարը
կոխել՝ զոր սրբազնն կոխած էր: Քա-
նի՞ լուռ և անշփոթ ժամեր, քանի՞ մութ
ու ցուրտ զիշերներ, լուսնկայ կամ ան-
լուսին երկինք տեսան մեր յերմեռանդն
ուխտաւորը՝ անծանօթ և անմարդա-
ձայն ճամբուն վրայ. ոչ ճմրան ձիւն ու
բուքն, ոչ տօրոսական ցուրտ պախրցին,
ոչ հողմակոծ ծառերուն և յրերուն մըր-
մուան, ու գաղանաց մնչել և կանչեն,
և ոչ յանկարծ դարանողի և իր առա-
ջին պայլը սպաննող աւաղակին պա-
տահելու վախն, կրնան արդիլել զարր-
բասէրն. որ իբրեւ զիրաշալին այն Հարսն
տիեղերական փեսային խանդակաթ՝
լսէր անոր ծածուկ ձայնը. « Ե'կ 'ի լի-
քանանէ ('ի քո պալատանէ) համրան. Եկ
այսր 'ի լիբանանէ. եկեացես և անցցես
'ի գլխոյ հաւատոյ՝ 'ի կատարէ Սանի-
բայ և Հերմոնի, 'ի մայրեաց առիւծուց և
'ի լերանց ընծուց ». և անցնէր երթայր

իբրեւ զաղաւմին միակ կատարեալ և
զեղեցիկ՝ կալու սրբութեան տաճարաց
դրանդեաց ներքեւ. անձայն լոիկ աղօթ-
քով՝ սրտանալու 'ի սէր հոգւոյն տիրո-
ջը, և սրտացընելու զնա յիւր մաքուր
մէրն. կամ երբեմն ճամբուն վրայ կանգ
առնելով, հազիւ վանաց և եկեղեցեաց
դրանց մօտեցած՝ կ'ընկնէր 'ի ծունկս,
շրթունքները մերձեցընէր՝ պատնէր սրբ-
բազանից կոխած գետինը, թրջէր մար-
գարտակաթ արտասուզը, քաէր դա-
լար գէմիերը այն կրկին սրբեալ հողոյն
ու կաւոյն վրայ. անով շիէր շպարէր
թագուհին Հայոց իր պայծառ հոգւոյն
դրաի հայելին: Այս էին սիրելագոյն
զարդարանք և զեղերանք և զրօսանք
Զապելի:

Այսպիսի դէմք, այսպիսի սիրտ, այս-
պիսի հոգի՝ բնչ կերպով կրնար երեկիլ
աշխարհային և թագաւորական հանդի-
սից մէջ. — Ինչպէս որ կու վայլէր սուրբը
և զգաստ զշխոյի մը. որ իր ամեն պարտ-
քը և պատշաճը զիտելով՝ չէր պակսեր
և 'ի տօնից և յընկերութեանց, անոնց
նոր վայելութիւն մաւելցընելով իր
չափաւորութեամբ և պարկեշտութեամ-
բըն. և ինչպէս արքունի ծիրանեաց վե-
րարկուք չեին կրնար խափանել իրենց
ներքեսէն հազած խոշոր և խայթող ըզ-
գեստը, և ոչ այլ չնորհագեղ թափան-
ցիկ ժպիտն՝ հոգւոյն զուարթութեան
ճառագայթը. որ զինքը պատկառելի
կ'ընծայէր աւելի քան իր ծաղկած հա-
սակն և ծանրագին թագն: Ոչ ոք եր-
բէք լսեց այն շրթունքներէն աւելորդ
խօսք կամ կատակ մը, և ոչ ձայնով ծի-
ծաղ մը փրթաւ բերնէն. ծանրիկ լըր-
ջութիւնն բնական ձեւ և գոյն կ'երեսէր
կերպարանացն:

Ժ. Բաներուս բարեբազզաբար վկայ
ունիմք, Հայկակ, ժամանակակից յի-
շատակագիրներ, բայց զժբաղդաբար՝
այսչափիս միայն. ուր էր թէ աւելի ըլ-
լային կամ մեզի հասնէին այսպիսի յի-
շատակք, և այլ աւելի բաներ պատմած
ըլլային Զապելի վրայ. զուցէ մեր միջէն
այլ ելնէր Մոնղալանպէր մը մանրամաս-
նաբար գրելու Հայոց սրբակենցաղ դը-

Խոյին վարքը, որպէս նա Ունկարացի զշխոյին և Զապելին (Եղիսաբեթի) : . . . Այս յիշատակս՝ որ յանկարծ բերնէս ելաւ, կու ստիպէ զիս, Հայկակ, խորհրդագածութիւն մ'այլ ընելու և ցուցրնելու զարմանալի և վերնախնամ հանդիպակցութիւններ այս երկու թագու հեաց մէջ, որ թերևս դեռ դիտուած չեն և շատ մտադրելիք են: — Երկուքն այլ համանուանք. երկուքն այլ ժամանակակիցք, զշխոյն կիւլիկիոյ և դրշխոյն թուրինկիոյ. ասիկա իրրե տասն տարի յառաջ ծնած քան զմերն, 20 տարի այլ անկէ առաջ բոլորեց կեանքը. Նա երկու երկվեցեակ տարի ապրելով՝ մերս՝ երկք: Երկուքն այլ չորս տարեկան էին՝ երբ իրենց վիճակին տիրուհի սահմանուեցան. երկուքն այլ նոյն մէկ տարուան մէջ (1224—2) պսակուեցան. Զապելընդ Ֆիլիպի, Եղիսաբեթընդլուդիկ Հերմանայ աշխարհատեառն (Լանտկրավի): Բայց մեծագոյն և հրաշախառն հանդիպուածն այս է, որ յառաջ քան զայն, ատեն մը՝ քանի մը տարի սահմանուած էր՝ որ այս երկու լեռնարնակ հաւալներս իրարու քոյր ըլլային. Թուրինկիա և կիւլիկիա սիրալի կերպով զիրար ողջունեցին. Եղիսաբեթ դուստր է այն Անդրէասի և քոյր այն Անդրէասի՝ որոց մէկն Զապելի այր միւսն սկեսր այր պիտի ըլլային. և եթէ անոնք չեղան, եթէ Զապել չեղաւ կողակից կըրսեր Անդրէի, և եթէ երկու սրբածեմ աղաւնիքն չեղան թեսակիցք մէկ թառի՝ մէկ սեղանի՝ մէկ խորանի քով, եթէ Ունկարաց սուրբ օրիորդն երիցութեամբ հասակին չգրկեց ու գգուեց զօրիորդն Հայոց, և ոչ սա բազկիկ բոլորելով անոր նազելի վկէն կախուեցաւ, սակայն երկնաւոր բաղզն զուգեց գրեց ըրաւ զանոնք քոյրակից, գործակից, հոգեկից: Ինչ մասնաւոր առաքինութիւն և գործ տեսանք Զապելի վրայ, զնոյն պատմեն և Եղիսաբեթի վրայ. Երկուքն այլ նոյնպէս սրբասէր, աշխարհատեաց, պահեցող, աղօթող, աղքատասէր, հիւանդապահ. Զապել վանաց և եկեղեցեաց դրանց քով կ'աղօ-

թէր, Եղիսաբեթ երբ իր պալատին մատրան գուռը գոց գտնելու ըլլար՝ գուրսը ծունկ դրած կ'աղօթէր. — Զապել իր մայրաքաղաքին՝ Սոյ մէջ հիւանդանոցը շինեց, որ ուզած ատեն երթայ դարմանէ ցաւագարները. Եղիսաբեթ իր Մարպուրկի ապարանից ստորոտը շինեց հիւանդանոց մը՝ նոյնպէս խնամք տանելու: Երկուքին ամուսինքն այլ տեսնելով իրենց ընկերին բարեպաշտութիւնը՝ թողուցին համարձակ և գործակից այլ եղան անոնց առաքինի գործոց. — Երկուքն այլ գրեթէ նոյն մէկ տարուան միջոց (1225—6) իրենց երկրաւոր մեծ կորուստն ըրին, զֆիլիպ՝ Զապել, զէերման՝ Եղիսաբեթ. սա 20 տարուան երեք զաւակօք այրի մնացած՝ իր աներձագին գրգռութեամբը իրու տէրութեան զանձը վատնող (առ աղքատս), հալածեցաւ յարքունեաց, և իրու անաշխարհիկ պանդուխտ վարած մնաց մեծ չարակրութեամբ և աւելի մեծ ուսրտառուչ համբերութեամբ. մինչև հալածողն անգամ զգաստանալով՝ նորէն դարձուց զտիկինն յարքունիս. բայց նա իր զաւակաց վիճակին ապահովացնելէն ետեւ քաշուեցաւ պալատէն դուրս առանձին տնակի մը մէջ, և միանձնական զգեստ հազնելով (Ս. Փրանկիսկոսի երրորդական կարգին) քիչ ատենէն մեծ ճգնութեամբ և սրբութեամբ կնքեց կեանքը (19 նոյեմբ. 1231), և քանի մը տարիէն (1235) դասեցաւ և յեկեղեցւոյ ՚ի կարգս Սրբոց: Այս վրշտաց և հալածանաց՝ կերպով մը կրնայ համեմատուիլ նոյն ատեն Զապելի ցաւը՝ Ֆիլիպի սպանման վրայ, առանձնանալն ՚ի Սելեկիա, և բռնի բերուիլն ՚ի Սիս յընկերութիւն չեթմոյ: Եւ եթէ սա այլ Հերմանայ պէս վաղամեռ ըլլար՝ անտարակոյս է որ Զապել այլ Եղիսաբեթի միանձնական կեանքն կ'ընտրէր, որուն արդէն այնչափ փափագէր յառաջ քան զպսակիլն ընդ չեթմոյ: Նախախնամութիւնն այսչափ սահմանեց երկրի վրայ նմանակցութիւնն այս երկու թագուհեաց, որոց անշուշտ աւելի մեծ է նմանութիւնն յերկինս. ուր՝

թէպէտ քանի մը տարի ուշ և աւելի ապրելով, բայց դեռ չուտ և անկատար կենօք՝ թուաւ և Զապել առ զուգակից անուանն, բաղդին և հոգւոյն. թողլով անմիսիթար յերկրի իր երկրաւոր զուգակից և թագակիցը, անկէց ունեցած զաւակները, (որոնց ոմանկը դեռ հազիւ իրենց մօր կաթը և սիրոյն մեղրը ճաշակեր էին), և բոլոր զինքը պատուող և պաշտող աշխարհը :

ԺԱ. Արդեօք զիպուածական ցաւ մը, թէ իր փափուկ սրտին հին հարուածէն բուսած վէրքն, թէ մանաւանդ սաստիկ փափազն առ լաւագոյն երանաւէտ կեանս, իր արդէն զեղեցիկ կեանքը փութացուցին՝ ի գեղեցկագոյն վախճան՝ առ ի փոխել յամենազեղեցիկ կենա դանութիւն։ Ո՞հ, քանի քաղցը և անոյշ եր այն հոգւոյ հրաւէրքն՝ որ եկաւ իրեն (՚ի 22 յունուարի, 1252ի). — ձայն ցան կալի երկնաւոր և անմահ փեսային, որուն հարանացեալ է ամենայն մաքուր և մաքրասէր հոգի. փան զի ինչու է հոգին՝ եթէ ոչ առ միանալ իր ստեղծողին հետ. — ձայն Քրիստոսի Աստուծոյ, զոր ոչ միայն հոգւոյն անօդ անյօդ ականջովն իմացաւ Զապել, այլ և զգալի կերպով մը լսելով՝ անպատմելի ուրախութեամբ իմացուց իրեն քովն եղող և իրքն հիւանդի նայողներուն, թէ ահա լսեմ ձայն՝ որ կանչէ զիս, Ե՛կ աղաւնի իմ, Ե՛կ կատարեալ իմ, Ե՛կ սիրելի իմ. և այս խօսքս իրքն վերջին բարով մնայք լսելով մերձակայիցն, հոգին՝ հոգւոյն փափագողաց հետ խառնուեցաւ, թողլով յերկրի քմծիծաղուպայծառ այլ անշարժ մարմին մը, ՚ի սուզ և ՚ի սէր հասարակաց : . . .

Իսկ թագուհին զկեանս աւանդեալ
Ու ՚ի կէտ կոչմանըն ժամանեալ.
Զայն ՚ի յերկնից ըզնա կոչեալ,
Զոր իւր ունկամբն յայտնի լըւեալ,
Ե՛կ աղաւնի՛ իմ, ասացեալ
Ե՛կ սիրելի իմ կատարեալ» :
Իսկ նա յորժամ զայս ձայն լըւեալ
Զըւարթագին սրտիւ բերկեալ,
Տեսլեամբ կերպին զըւարձացեալ
Ու ՚ի հոգին իւր ցընծացեալ.

Մերձակայիցըն զայս ազդեալ,
Եւ ընդ պատմելն՝ իսկոյն փոխեալ.
Զհոդին՝ ՚ի ձեռս Տեառն աւանդեալ,
Զիւցին ունայն՝ յերկրի թողեալ:
Զոր քահանայքն ակումբ առեալ
Զնա օրհնութեան հողոյ տըւեալ:
Արդ թագուհին յերկրէ ելեալ
Եւ առ Քրիստոս վերափոխեալ» :

Այսպիսաւոյ բարւոյ և բարերարի, սըրբակեաց և սիրելով թագուհւոյ, հարսին և մօր մահ՝ որչափ ցաւալի և սգալի եղած է կենակցին, զաւակացն, մերձաւորաց, պաշտօնէից և բոլոր աշխարհին, աղատաց և ռամկաց, աղքատաց և հիւանդաց, կրօնաւորաց և զինաւորաց, քեզի գիւրագոյն է հասկանալ, ինծի աւելորդ ըսեն, Հայկակ. աւելորդ սեպեմ և խառնել զքեզ անոր երկարաշար յուղարկաւորաց մէջ, յոր կըրնամբ եկած սեպել զբովանդակ կիւլիկիա և զմասն կիպրոսի և Անտիոքայ, եկեղեցական, քաղաքական և զինուորական խմբից բոլորը պատած. որոց մէջ չեմ այլ կրնար գոնէ պաղած պատկառանօք մատնանիշ չընել երկու զանազան ձեռվ բարձրապատիւ ալեոր զլուխներ, երկու նահապետքն Հայոց, երկու անուանակիցքն, կոստանդին կաթուղիկոս և կոստանդին արքահայր, խնամակեք և դաստիարակք թագուհւոյն և հօրամոյն սիրոզք. որք իրքն երկու մեծամեծ մայրիկ մըրկաշարժ անտառի մը իրենց զիմաց իրենցմէ շատ զալար և ծաղկաբողբոջ միջաբեկեալ ծառին վրայ ծռած՝ զողլոջուն ճիւղերով կ'ուլորին կ'երերան : Բայց դարձընենք աշուընիս իրեն զիլ ու գալար բարակ բարունակներէն, որոց անզրանիկն զեռհազիւ 46 տարեկան է. դարձընենք մանաւանդ այն փափուկ տնկոյն նեցուկ ու նշգարիկ եղող արքակաղնոյ նման պանծալի՝ բայց հիմակ քակեալ մենացեալ և կորացեալ թագաւորէն . . . Հեթումայն օրերն մեծ պատրաստութեան մէջ էր, հարկաւորաբար երթալու առ Մանկու խաքանն թաթարաց՝ յաշխարհ հեռի. Զապելի յանկարծ յանդարձ աշխարհ երթալն՝ այնքան խոր և արժա-

նաւոր սգով պատեց զայրիացեալ թա-
գաւորն, որ երկու տարի չկարցաւ հե-
ռանալ սեռ սենեկէն, ապա թէ գնաց:

Հեթում՝ ոչ կենակից և թագակից
միայն էր Զապելի, այլ և անարդել գոր-
ծակից անոր սրտին բարի բերմանց. և
եթէ իր աղքունի անհրաժեշտ պարտքն
և 'ի մօրէ որբացեալ զաւկներուն հոգն՝
չպատուիրէր, թերես աւելի շուտով թու-
զուր ինքն այլ թագը, և առանձնակեաց
հոգեկեաց մ'ըլլար. ինչպէս որ ըրաւ
այլ վերջը, յետ տեղաւորելու իր զըս-
տելքը՝ և թագը թողլու առ անդրանիկն
լիսն (յամին 1269). որ և սա իր ցանկա-
լի և ցաւալի մօրն անմոռաց յիշատակը
կերպով մը կենդանացնելու համար՝ իր
երեք երեց զստելքն անուանեց Զապ-
լուն, Զապել, Սիպիլ: — Զապել թագու-
հոյ մահացունշխարքը անմահութեան
մաղթանք և անսուս յուսովն պատե-
լով ու կնքելով՝ հանգուցին 'ի տապա-
նատուն Ռուբինեան պայազատաց, 'ի
վանքն Դրազարկ, ուր նախ հանգեր էր
տեղայն շինողն Թորոս Ա՝ թոռն Ա և մեծ
Ռուբինի, և իրմէ ետք իրեն ցեղէն շատ
պարոնայք և պարոնուհիք. և ուր յետ
19 տարւոյ (1270) հանգուցին թագու-
հոյն քով իր թագակից և կողակիցն
այլ՝ թէ իրբե արքայ Հեթում և թէ իր-
բե Եղբայր-Մակար. որ և Զապելի պէս
բազդ ունեցաւ օտար սուրբ թագաւորի
մը հանդիպակից ըլլալու: Իրենց երախ-
տագէտ և սիրանուէր որդիքն և պայա-
զատք՝ արքունի սրբապատում Յայսմա-
ւուրաց մէջ նշանակեցին Հեթմոյ հան-
գրստեան օրը (28 հոկտեմբերի), և այս
օրս (22 յունուարի) զպաշտելի յիշա-
տակն Զապելի. որը 'ի կեանս և 'ի մա-
հուն՝ ճանաչողք և մերձագայք Սուրբ
անուանէին. ինչպէս որ Հեթմեանց՝
յիշատակն այլ՝ ոչ միայն մեր այլ և լա-
տին միանձանց հին ժամագրոց ումանց
մէջ անցած է երանելեաց կոչմամբ: Ե-

1 թէ Հեթում Ա, թէ իր թոռն Հեթում Բ,
և թէ ասոր համշերակն Հեթում (Պատմիչ) տէր
Կոռիկոսոյ, իրեքն այլ կրօնաւորած Են 'ի վանս
Լատինաց 'ի Հայո, 'ի Կիլրոս և 'ի Փրանկաստան,
և հոս մեռած է յետին. որոց վարքն քիչ մը
շփոթէ իրարու՝ արևմտեայ սրբագիր միանձն:

րանիկ էր ազգիս այլ, եթէ ինչպէս շատ
արժանաւորաց յիշատակն անմահացու-
ցեր է, զոմանցն այլ նորէն արթնացը-
նէր: Իսկ քեզ, Հայկակ, անշուշտ ա-
խորժելի կ'ըլլայ, քու ընտանեաց և մեր
ձաւորաց միջի մատղաշ Զապելաց ծա-
նօթացընել իրբե իրենց նախընթաց օ-
րինակ համեստութեան և իմաստու-
թեան ու Պաշտպան՝ մեր ազգին վերջի
պայազատութեան մէջ ամենէն անուա-
նի, պատուելի, սիրելի և սրբենի ե-
ղած թագուհին՝ ԶԱՊԵԼ:

Գերմանիոյ Գալմար քաղաքը՝ հիւր
մը կ'ինայ դիմաւոր պանդոկի մը մէջ.
պանդոկապետն՝ ըստ սովորութեան, հիւ-
րոց տեսրակը առջել կը գնէ՝ որ անու-
նը նշանակէ. և երբ նա կը ստորագրէ
այսպէս՝ կարուրս Գրագէտ, պանդոկա-
պետն՝ պաղ կերպով կը վարուի: Հիւրն
երկրորդ առաւտուն պանդոկէն կ'ել-
լայ: Քանի մը ժամէն սպայ մը կու գայ
պանդոկապետին թղթիկ մը կու տայ,
որուն մէջ գրուած էր, թէ Ես միտք ու-
նէի շաբաթ մը մնալու քու պանդոկիդ
մէջ, բայց տեսնալով որ քեզի յարդոյ
չեն ուսմանց հետևողք, ուրիշ տեղ գնա-
ցի: Նամակին ստորագրութիւնն այլ էր՝
կարուրս գրագէտ և բագաւոր Շուե-
տիոյ: — Յայտնի է պանդոկապետին
գլուխը իջած կայծակը: — Խակ թագա-
ւորն Շուետաց յիրաւի քերդուածներ
գրած և հրատարակած է:

1 Յետ Զապելը՝ նու նորա առաջին թագուհին
Հայոց կին Գ Լեռնի՝ Կեռան՝ որ է Կիւ Աննա (Քի-
րիա-Աննա) գուասոր Լամբրոնի տիրոջն, իր սկես-
րին բարեպաշտութեան ժամբան բանեց, և աւելի
բազմաթիւ զաւակաց մայր ըլլալէն ետև կրօնա-
ւորեալ մեռաւ (28 յուլիսի 1285), մեծ համբաւով
սրբական վարուց. սա կոչուէր և թէ-անի, այ-
սինքն թէոֆանիա: — Նոյնպէս գովութեամբ յի-
շատակին՝ իր քոյրն Մարիա (Յ գեկտ.) — իր երեք
վերցիշեալ Զապելանուն գտաերքն. իր տաշն Ֆի-
դ. — Դ կոստանդին թագաւորի մայրն Մարիա տի-
կինն (27 յուլիս): և վերջին թագուհին Հայոց Մա-
րիան, կին Գ Լեռնի, և իր գուասորն Փինս. — Նախ
ծանուցեալն Բ Զապէլ (Յ մայիս):